

Բանալի բառեր՝ ագրոպարենային ոլորտ, ազատ մրցակցություն, վարչական խոչընդոտ, մակրոտնտեսական համամասնություններ, հակամրցակցային համաձայնություններ, անբարեխիղճ մրցակցություն:

**ՀՏԴ 338.439**

## ԱԶԱՏ ՄՐՑԱԿԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎԱՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ատենախոսության թեմա՝  
**Մրցակցային միջավայրը եվ դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում**

**Դավիթ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱԿԳ ասպրանքագիտություն և մարքեթինգի ամբիոնի դասախոս

Գիտական դեկավար՝  
**Էդուարդ ՂԱԶԱՐՅԱՆ**  
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Յուրաքանչյուր երկրում ագրոպարենային ոլորտում ազատական տնտեսական համակարգի ձևավորման ու կայուն զարգացման կարևորագույն գլխավոր պայմաններից մեկը առողջ մրցակցային միջավայրի առկայությունն է: Այս առումով, երկրի ագրոպարենային ոլորտում առկա ապրանքային շուկաների զարգացման տնտեսական քաղաքականության առանցքային բաղադրիչը պետք է լինի մրցակցային արդյունավետ միջավայրի ապահովումը: Թերևս, միայն մրցակցության սրմամբ է հնարավոր հասնել նպատակադրված գնաճի մակարդակի ապահովման, ապրանքների որակի բարձրացման, ապրանքային ու մակնշային առաջարկի բազմազանացման խնդիրների լուծմանը<sup>1</sup>:

Իր դինամիկ բնույթի և բազմաֆունկցիոնալ կառուցվածքի պատճառով մրցակցային միջավայրը շուկայական համակարգի ամենադժվար կարգավորվող տիրույթներից մեկն է: Ուստի, այս ուղղությամբ պետական կարգավորման օրենսդրական բարեփոխումներն ու գործառնությունները շարունակաբար պետք է կրեն որոնողական բնույթ՝ արդյունավետ մեխանիզմների մշակմամբ ու օգտագործմամբ, համապատասխանեցնելով դրանք տվյալ երկրի տնտեսական կառուցվածքին ու առանձնահատկություններին:

Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում մրցակցային իրավիճակի վերլուծությունը և մրցակցային օրենսդրության կիրարկման վերջին տասնամյակի փորձը ցույց է տալիս, որ օրենքով ամրագրված մրցակցության խաթարման գործողությունների սահմանափակումների և բացասական այլ դրսևորումների կարգավորմանն ուղղված մեխանիզմները դեռևս կրում են բացթողումներ և չեն նպաստում ոլորտում առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը: Դրանց արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև ագրոպարենային ոլորտի առանձնահատկությունները, պահանջում են համալիր վերլուծությունների հիման վրա նոր մոտեցումների ձևավորում և դրանցով պայմանավորված միջոցառումների իրականացում:

Հայաստանում ագրոպարենային ոլորտում առողջ մրցակցային միջավայրի ձևավորման և հակամենաշնորհային քաղաքականության իրականացման առումով, թերևս, ամենախոցելի խնդիրներից մեկը պետք է համարել ոլորտում վարվող ընդհանուր տնտեսական և մրցակցային քաղաքականությունների ոչ-կոորդինացվածությունն ու ոչ-ներդաշնակությունը: Այս առումով, առաջին հերթին անհրաժեշտ է առանձնացնել ագրոպարենային ոլորտի վերաբերյալ ընդունվող իրավական ակտերի, կնքված պայմանագրերի փորձաքննության անցկացման և արգելված պետական օժանդակության տրամադրման վերաբերյալ տվյալ բնագավառում պետական լիազորված մարմնի՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) վերահսկողական գործառնությունների ընդլայնման հարցը: Վերջինս օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում իրավական ակտերի՝ մրցակցային կանոններին դրանց համապատասխանության և մրցակցային միջավայրի վրա հնարավոր ազդեցության գնահատման փորձաքննություն իրականացնում է հիմնականում իր նախաձեռնությամբ՝ կրելով ոչ պարտադիր բնույթ: Այս հանգամանքը, ըստ էության, Հանձնաժողովի վերահսկողությունից դուրս է թողնում ագրոպարենային ոլորտում կարգավորման բոլոր այն մեխանիզմների դիտարկումը, որոնք կարող են ունենալ առավել բացասական ազդեցություն ոլորտի մրցակցային և գործարար միջավայրի վրա: Արդյունքում ագրոպարենային ոլորտում առկա ապրանքային շուկաները կարող են և շատ դեպքերում ենթարկվում են լուրջ դեֆորմացիաների՝ գործարար ու ներդրումային միջավայրի վատթարացման, տնտեսական ակտիվության նվազման, ինչպես նաև մրցակցության սահմանափակման և այլն:

**Դետևաբար, հանրապետության ագրոպարենային ոլորտում արդյունավետ մրցակցային քաղաքականության իրականացման նպատակով անհրաժեշտ է Հանձնաժողովի դերակատարության բարձրացումը վերջը նշված գործընթացում, այն է՝ նրա կողմից պարտադիր փորձաքննության անցկացում գյուղատնտեսության և ագրոպարենային ոլորտում ընդունվող առաջնային իրավական ակտերի, ստորագրված պայմանագրերի նկատմամբ՝ մրցակցային կանոններին դրանց համապատասխանության և մրցակցային միջավայրի վրա հնարավոր ազդեցության տեսանկյունից:**

<sup>1</sup> Ս.Ավետիսյան, Ա. Գրիգորյան, «Պարենային և առաջնային անհրաժեշտության ոչ պարենային ապրանքների շուկաների բնորոշ գծերը և կարգավորման կառուցակարգերը ՀՀ-ում», «ՏՆՏԵՄԱԳԵՏ» հրատարակչություն էջ՝ 5, Երևան 2015թ.:

Մրցակցային օրենսդրության կիրարկման տեսանկյունից լուրջ բացթողում է նկատվում նաև ագրոպարենային ոլորտում պետական օժանդակության (վարկ, սուբսիդիա, հարկային արտոնություն և այլն) տրամադրման դեպքերի նկատմամբ Հանձնաժողովի կողմից իրականացվող թույլ վերահսկողությունը, հատկապես արգելված պետական օժանդակության տրամադրման դեպքերում միակողմանի պատասխանատվության ենթարկումը: Համաձայն գործող օրենսդրության՝ պատասխանատվության են ենթարկվում միայն այդ օժանդակությունը ստացած տնտեսվարող սուբյեկտները, իսկ օժանդակություն տրամադրած պետական մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնք ուղղակի կամ անուղղակի ձևով նպաստել են տվյալ իրավախախտմանը, պատասխանատվության չեն ենթարկվում<sup>2</sup>:

Այսպիսի մոտեցումը, անշուշտ չի կարող տրամաբանական համարվել, քանի որ նման դեպքերում չի կանխվում պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից հակամրցակցային վարքագծի հետագա դրսևորումները, ինչը լրջորեն կարող է խոչընդոտել ոլորտում մրցակցային միջավայրի բարելավմանը: Նման մոտեցման բացառման նպատակով անհրաժեշտ է ընդհանրապես նոր օրենսդրության ընդունում, որը ոչ միայն կկանոնակարգի պետական օժանդակության տրամադրման մեխանիզմները, այլ նաև պատասխանատվություն կսահմանի նաև արգելված պետական օժանդակություն տրամադրած պաշտոնատար անձի նկատմամբ:

**Այս առումով առաջարկվում է ընդունել «Պետական օժանդակության վերահսկման մասին» ՀՀ նոր օրենք՝ դիտանցման մեխանիզմների հստակ սահմանմամբ:**

Ագրոպարենային ոլորտում մրցակցային միջավայրի բարելավման տեսանկյունից չափազանց կարևոր է բարձր կենտրոնացված ապրանքային շուկաներում իրականացնել գնագոյացման վերահսկողություն, հատկապես սոցիալական նշանակություն ունեցող ապրանքների շուկաներում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ տնտեսվարող սուբյեկտների կողմից չարաշահումներ իրականացվում են ընկերության միանձնյա գործադիր մարմնի իրավասություններն իրականացնող ղեկավար անձանց կողմից, սակայն գործող օրենսդրությամբ ֆիզիկական անձը որպես տնտեսվարող սուբյեկտ դիտարկվում է միայն համակենտրոնացումների կնքման ժամանակ<sup>3</sup>: Հետևաբար «տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունը լրամշակման կարիք ունի և այս դեպքում որպես «տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձ» պետք է դիտարկել տնտեսվարող սուբյեկտի միանձնյա գործադիր մարմնի իրավասություններն իրականացնող անձին կամ կոլեգիալ գործադիր մարմնի անդամ կամ կազմակերպչական, կարգադրական կամ վարչատնտեսական գործառույթներ իրականացնող ղեկավար անձին, որի կողմից օրենսդրության խախտման դեպքում պատասխանատվություն կկիրառվի հենց նրա նկատմամբ:

Մրցակցային կանոնների խախտման դրսևորումների իրական պատկերի բացահայտման համար կարևորվում է գերիշխող դիրքի ճանաչման առավել հստակ չափանիշների սահմանումը: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ ապրանքային շուկաներում իրականացվող ուսումնասիրությունների արդյունքում և գործող օրենքի շրջանակներում տնտեսվարող սուբյեկտը ճանաչվում է գերիշխող դիրք ունեցող, էլենտով շուկայում իրացման կամ ձեռքբերման ծավալներից:

Գործող Օրենքի համաձայն տնտեսվարող սուբյեկտը ապրանքային շուկաներում համարվում է գերիշխող դիրքի ունեցող, եթե ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման ծավալներով.

1) գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը, կամ

2) առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտները միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը, կամ

3) առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտները միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը<sup>4</sup>:

Նման ձևով հատկորոշումը կարծում ենք արդարացված չէ, քանի որ չկա որոշակի նվազագույն սահման, թե ընկերություններից յուրաքանչյուրի բաժինը նվազագույնը քանի տոկոս պետք է լինի, որպեսզի համարվի գերիշխող դիրք ունեցող: **Հետևաբար ճիշտ կլինի կիրառել «նվազագույն բաժին» հասկացությունը (չափը) կամ սահմանել բաժինների միջև «նվազագույն տարբերություն» հասկացությունը (չափը):**

Գործող Օրենքի համաձայն, առևտրային ցանցը համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե հանդիսանում է չորս կամ ավելի առևտրային օբյեկտի համախումբ<sup>5</sup>: Սակայն շուկայում քիչ չեն այն առևտրային օբյեկտները, որոնք չեն հանդիսանում համախումբ, սակայն գտնվում են որևէ տնտեսվարող սուբյեկտի ընդհանուր կառավարման ներքո: Ավելին, շատ դեպքերում տվյալ տնտեսվարող սուբյեկտին պատկանող կամ նրա կողմից օգտագործվող միևնույն ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո գործում են չորս կամ ավելի առևտրային օբյեկտներ, որնք հենց հանդիսանում են առևտրային ցանց:

**Դիտարկված փաստերը ևս մեկ անգամ ցույց են տալիս, որ գերիշխող դիրքի ճանաչումը կարիք ունի վերանայման՝ չափանիշների տիրույթների ավելի հստակ տարբերակմամբ:**

Ագրոպարենային ոլորտում և ընդհանրապես տնտեսության մեջ մրցակցության պաշտպանության քաղաքականության հիմնախնդիրներից է հակամրցակցային համաձայնությունների բացահայտումը և կանխարգելումը, որոնք, դժվար ապացուցվող իրավախախտումներ են: Խնդրի կարգավորումը հույժ կարևոր է, նկատի ունենալով այն հանգամանքը, որ գների չիմնավորված բարձրացման, անբարեխիղճ մրցակցության և, առհասարակ, մրցակցությունը սահմանափակող իրավախախտումները առավելապես տեղի են ունենում հենց հակամրցակցային համաձայնությունների արդյունքում, ինչպես նաև դրանք կնքվում են գաղտնի և ապացուցողական մեխանիզմի կիրարկումը դառնում է գրեթե անհնար:

**Այս հարցի լուծման համար, անշուշտ, կարելի է կիրառել միջազգային փորձը՝ սահմանելով «վաղորդյան ստուգումների մեխանիզմներ (dawn raid),** երբ հնարավոր հակամրցակցային համաձայնությունների բացահայտման և ապացուցման համար առանց նախազգուշացման ստուգումներ են իրականացվում հակամրցակցային համաձայնությանը ենթարկյալ մասնակից ընկերությունների մոտ՝ ցանկացած պահի «այցելելով» տնտեսվարող սուբյեկտների արտադրական կամ գործունեության վայր, պահանջել կնքված համաձայնությանը առնչվող ցանկացած փաստաթուղթ՝ ընդհուպ նաև տնօրենների անձնական գրառումներին և այլն:

<sup>2</sup> «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 36, մաս 6

<sup>3</sup> «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, մաս 1

<sup>4</sup> «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 2

<sup>5</sup> «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 5

Կարծում ենք միայն նման գործիքների կիրարկման, ինչպես նաև նշված օրենսդրական հստակեցումների արդյունքում հնարավոր կլինի բացահայտել և դատական ու վարչական վարույթներում օգտագործել փաստացի ձեռքբերված և ամրագրված ապացույցներն ու համապատասխան պատժամիջոցների կիրառմամբ կանխել հետագա հնարավոր իրավախախտումները:

**Այսպիսով, հանրապետության ագրոպարենային ոլորտում արդյունավետ մրցակցային քաղաքականության իրականացման նպատակով անհրաժեշտ է, ոչ միայն դիտարկել ոլորտի առանձնահատկություններն ու խնդիրները, այլ նաև անդրադառնալ մրցակցային օրենսդրության խնդիրներին ու լիազոր մարմնի գործառույթներին:**

**Ելնելով օրենսդրական խնդիրներին և Հանձնաժողովի գործառույթներին անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական փոփոխություններ, որոնցով.**

✓ բարձրացնել Հանձնաժողովի դերակատարությունը ոլորտում ընդունվող իրավական ակտերի նկատմամբ, այն է՝ նրա կողմից պարտադիր փորձաքննության անցկացում գյուղատնտեսության և ագրոպարենային ոլորտում ընդունվող առաջնային իրավական ակտերի, ստորագրված պայմանագրերի նկատմամբ՝ մրցակցային կանոններին դրանց համապատասխանության և մրցակցային միջավայրի վրա հնարավոր ազդեցության տեսանկյունից,

✓ ընդունել «Պետական օժանդակության վերահսկման մասին» ՀՀ օրենք՝ դիտանցման մեխանիզմների հստակ սահմանմամբ,

✓ «տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձ» դիտարկել տնտեսվարող սուբյեկտի միանձնյա գործադիր մարմնի իրավասություններն իրականացնող անձին կամ կոլեգիալ գործադիր մարմնի անդամ կամ կազմակերպչական, կարգադրական կամ վարչատնտեսական գործառույթներ իրականացնող ղեկավար անձին,

✓ վերանայել գերհշխոդ դիրքի ճանաչման քանակական չափորոշիչները՝ դրանց չափանիշների տիրույթների ավելի հստակ տարբերակմամբ,

✓ հակամրցակցային համաձայնությունների բացահայտման և կանխարգելման նպատակով կիրառել միջազգային պրակտիկայում ընդունելի «վաղօրոյան ստուգումների մեխանիզմը» (dawn raid):

Ներկայացվել է 14.02.2018թ.  
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.